

ՄԱՐՏԵՐԸ ԿԱՏԱՂԻ ԵՆ ԼԱԶԻՆԻ ԵՒ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆՆԵՐԸ

ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԳԻ
ՆՈՐ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՐԵՒԱՆ ԳՆԱՑ, ԵԿԱԻ

Հինգշաբթի առտու (Սեպ. 24) Երևանին մեր առած լուրերուն համաձայն, համեմատական հանդարտութիւն մը կը տիրէր սահմանամերձ շրջանները բայց կատաղի կռիւներ կը շարունակուէին Լաչինի գօտիին շուրջ (ուր Ադրբեջանցիք շատ մեծ ուժեր կ'օգտագործեն) և Մարտակերտի: Բացարձակապէս սուտ էր այն լուրը զոր տուած էին Բաքուի իշխանութիւնները ինչ կը վերաբերի Մարտունիի գրամաման: Լաչին ալ հայկական ինքնապաշտպանութեան ուժերը տէր կը մնային իրեց դիրքերուն, ետ մղելով հակառակորդը:

Չորեքշաբթի օր (Սեպ. 23) կրկին օդային ուժակոծութեան կ'ենթարկուէր Ստեփանակերտ: Նախորդ ուժակոծութեան հետեւանքով երկու մեռեալ կար եւ 21 վիրաւոր: Մարտունիի վրայ եղած թնդանօթած գոլութենէն ալ երկու բնակիչ մեռած էր, երեք ուրիշներ ալ վիրաւորուած: Չորեքշաբթի, նաեւ Ասկերանի շրջանի դիւղերու վրայ ուժակոծ էր ինկած են: Ադրբեջանական ուժերու եւ զինամթերքի կուտակումները կ'աւելնան Մարտունիի շրջանի ճարտար դիւղի դիմաց եւ Սմիրանլարի մօտերը, ինչպէս նաեւ Քելրաջարի շրջանը:

Հակառակ տիրող անապահովութեան, Ստեփանակերտի մէջ հանդիսաւոր ժողով տեղի ունեցած է նուիրուած անկախութեան առաջին տարեգարձին: Ելոյթ ունեցած են պաշտպանութեան պետական կոմիտէի նախագահ՝ Ռոպէր Քոչարեան, Նախարարաց Խորհուրդի նախագահի տեղակալ՝ Ժիրայր Պօղոսեան, ինքնապաշտպանութեան կոմիտէի նախագահ՝ Սերժ Սարգսեան, պաշտպանութեան պետական կոմիտէի տեղակալ Բորիս Առուշանեան, որ կը ղեկավարէր Հոռմի զարարական պատուիրակութիւնը: Խօսած են նաեւ այն աշխատանքներուն մասին, որոնք կը տարուին Արցախ կենսական ինդիւրներու շուրջ, ինչպէս ընդհ. զօրահաւաք, Արցախի զինուած ուժերու մարտունակութեան բարձրացում, աշխատանքի կարգապահութեան ամրապնդում, տնտեսութիւնը ռազմական դրութեան պայմաններուն յարմարցնելու հարցեր եւլն. եւլն.:



Երեքշաբթի, Սեպ. 22-ին բացուեցաւ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի 5-րդ նստաշրջանը: Նխտին սկիզբն իսկ, մէկ վայրկեան յոտնկայս լռութեամբ յարգուած է երեսփոխան՝ Սամուէլ Շահմուրադեանի յիշատակը:

Նախագահ Բարդէն Արարքեան շնորհաւորելէ ետք նախորդ օրը լրացած անկախութեան առաջին տարեգարձը, ըսած է որ ներկայ նստաշրջանը իր աշխատանքները կը սկսի ռազմական, քաղաքական եւ տնտեսական շատ ծանր պայմաններու մէջ եւ այդ կացութենէն դուրս ելլելու համար Խորհրդարանը պէտք է աշխատի աւելի մեծ պատասխանատուութեամբ եւ արդիւնաբերութեամբ քան՝ ցայժմ: Ապա, Բարդէն Արարքեան ներկայացուցած է օրակարգի հրատապ հարցերը՝ Հացի մատակարարումին վերաբերեալ եւ ռազմական կացութեան:

Ելոյթ ունեցած է վարչապետը՝ Խոսրով Յարութիւնեան, որ ներկայացուցած է կառավարութեան աշխատանքները, որոնց անմիջական հեռանկարը կեղրոնացած է ձմրան վերաբերող հարցերուն վերայ. վառելանիւթ, հաց, անհրաժեշտ

կարգ-կանոնի հաստատում, պաշտպանութեան հարցեր: Յայտնած է թէ հիւսիսային Կովկասի կազուղիի վրայ տարուող աշխատանքները պէտք է վերջանան մինչեւ Հոկ. 10-15, ինչ որ թոյլ կու տայ որ Հայաստան օրական հասնի 10 միլիոն խորանարդ մեթր կազ, թերեւս ալ աւելի: Այդ թոյլ պիտի տայ կազը մատակարարել աղէտեալ գօտիին որպէս հիմնական վառելանիւթ: Միւս շրջանները կը մնան մազութի մատակարարման վրայ, որու պաշարները բաւարար չեն: Բանակցութիւններ կը տարուին Իրանի հետ, հարաւային շրջանները մազութով ապահովելու համար: Բանակցութիւններ կան նաեւ Ռուսաստանի հետ որ պէտք է միջնորդէ թուրքիոյ մօտ, որպէսզի ելեկտրականութիւն հայթայթէ Հայաստանի, ի հաշիւ Ռուսաստանի կողմէ թուրքիոյ տրուող կազի քանակի յաւելման: Ըստ Հայաստանի վարչապետին պէտք չէ յուսալ որ Արխաղիոյ կացութեան պատճառով փակուած Վրաստանի երկաթուղիի ճամբան շուտով կը բանի, անխմաստ է: Երկաթուղիի ներկայի անկառավարելի վիճակին մէջ, համեմատաբար միակ յուսալի միջոցը՝ կառքով փոխադրութիւնն է: Կառավարութիւնը աշխատանք կը տանի հիւսիսային Կովկաս ճամբու այլ մասերը կուտակուած քանի մը հարիւր վալոն վառելիքը, հացահատիկը տեղ հասցնելու ուղղութեամբ: Վարչապետը հազորդած է նաեւ որ Եւրոպական Խորհրդարանի կողմէ Հայաստանի տրամադրուած 36 միլիոն էֆիւով գնուած է 350 հազար թոն հացահատիկ որու 150 հազարի պայմանագիրը ստորագրուած է, ըստ որում Հայաստանի պայմանն է որ ան դայ Ախուրեան կայարանը: Եւ յոյս յայտնած է որ ապագային ալ կարելի կ'ըլլայ նաեւ ստանալ մարդասիրական բեռներ: Հայաստանի կառավարութիւնը, ըսած է վարչապետը, 495 միլիոն ուրբի յատկացուցած է սահմամերձ շրջաններու բնակավայրերու, հազորդակցութեանց, ապահովութեան նպատակներուն: Մշակուած ծրագիրը, այս ուղղութեամբ, կ'ընդգրկէ նաեւ պաշտպանութեան հարցերը: Խ. Յարութիւնեան շեշտած է Արցախի օգնութիւնը ձմրան նախօրեակին:

Չորեքշաբթի օր, Խորհրդարանը Գերագոյն Խորհուրդի նախագահի տեղակալ ընտրած է Արտաշէս Թումանեանը, որ Գերագոյն Խորհուրդի ելմտական և պիւտճէի հարցերու մնայուն Յանձնախումբի նախագահի տեղակալն էր:



Երեքշաբթի օր, Սեպ. 22-ին, Բարդէն Արարքեան ընդունած է Ֆրանսայէն ժամանած ԷՌ - ՓԷ - ԷՌ-ի պատուիրակութիւն մը, որու մաս կը կազմէին Տիկին

(Շար.ը Դ. Էջ)

Չ Մ Ր Ա Ն Ժ Ա Մ

ԺԱՄԱՑՈՅՑՆԵՐԸ ՄԷԿ ԺԱՄ ԵՏ ՏԱՆԻԼ

Շարաթէն Կիրակի, Սեպ. 26-էն 27 լուսնալիք դիշերը կ'անցնինք ձմրան ժամուն, հարկ է ժամացոյցները մէկ ժամ ետ տանիլ:

Միշէլ Հալիօմարի, Ռիչար Քաղընաւ, Էրիք Ռուա, Միշէլ Սիրանօ: Պատուիրակութիւնը ընդունուած է նաեւ վարչատեւանին կողմէ: Միասին քննարկած են Հայաստան - Ֆրանսա տնտեսական համագործակցութեան հարցերը: Ընդունելութեանց ներկայ եղած է Ֆրանսայի դեսպանը՝ Ֆրանսա տը Հարթէնկ:

Նոյն օրը, Վազգէն Մանուկեանն ալ ընդունած է Ֆրանսացի քաղաքական դէմքերը: Խօսակցութեան ընթացքին շօշափուած են պաշտպանութեան կազմակերպման եւ պաշտպանական համակարգի ձեւաւորման առընչուող հարցեր:



Չորեքշաբթի, Սեպ. 23-ին Նիւ-Երոքի մէջ, նախագահ Լեւոն Տէր-Պետրոսեան կը շարունակէր իր տեսակցութիւնները: Այսուղղութեամբ, հանդիպում ունեցած է Պութրոս Ղալիի, իրանի Արտաքին նախարարին՝ Վելայէթիի, Իսրայէլի Արտաքին նախարարին՝ Փէրէսի, Կիպրոսի նախագահին՝ Վասիլիուի հետ: Միշտ խօսուած է Արցախի մասին եւ ընդհանուր ձեւով կարծիքն այն եղած է որ նախ եւ առաջ հարկ է հրադարար հաստատել:

Նախորդ օրն ալ, ԵՍպ. 22-ին, Հայաստանի Արտաքին նախարար՝ Բաֆֆի Յովհաննէսեան թուրքիոյ Արտաքին նախարար՝ Հ. Չէթինի կողմէ հրաւիրուած էր այն ճաշին, զոր թուրք նախարարը կուտար ի պատիւ Սեւ Ծովի համագործակցութեան Խորհուրդի անդամներուն: Բ. Յովհաննէսեան հանդիպումներ ալ ունեցած է Դանիոյ, Իտալիոյ, Ճափոնի իր պաշտօնակիցներուն հետ:



Սեպ. 24-ին, Իւմանիթէ եւ Քոթիտիէն տը Փարի կ'անդրադառնային Ղարարաղի: Առաջինը կը հաղորդէր Ստեփանակերտի նոր ուժրակոծութիւնը, երկրորդը կ'աւելցընէր նաեւ ցամաքային բուռն կռիւններու դոյութիւնը եւ ազերի յարձակումը: